«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների, ծնողների հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ *Երևանի հ. 162 մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ*

ԴԱՍՏԻԱՐԱԿ՝ *Լուսինե Բեգլարյան*

ՂԵԿԱՎԱՐ՝ *Ժաննա Ավետիսյան*

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ----------3-4

Թեմայի բովանդակություն ----------5-16

1.Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների, ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ սաների կրթական աշխատանքների կազմակերպման ու ընտանեկան դաստիարակության հարցերում ---------- 5- 8

2.Մանկապարտեզի և ընտանիքի կապը որպես անհատական մոտեցման արդյունավետ իրականացման պայման---------- 9-16

Եզրակացություններ, առաջարկություններ ————----------17

Գրականության ցանկ----------18

Ներածություն

Երեխան ունի տեսնելու, մտածելու և զգալու իր առանձանահատուկ ունակությունները: Չկա ավելի հիմար բան, քան դրանք մեր ունակություններով փոխարինել փորձերը:

Ժան Ժակ Ռուսո

Թեմայի արդիականությունը՝

Դաստիարակությունը, ինչպես հայտնի է, նպատակաուղղված ներգործություն է երեխաների զարգացման, նրանց գիտակցության և վարքի, աշխարհիայացքի, արարքների և սովորությունների վրա: Դաստիարակության հիմնական նպատակն անձի ձևավորմանն ու նրա հետագա զարգացմանը նպաստելն է, սկսած ծնված օրից: Ուստի ընտանիքը եղել և մնում է անձի դաստիարակության հիմնական օղակն ու վճռական գործոնը: Կրթական հաստատության, մասնավորապես՝ մանկապապտեզների գործունեության արդյունավետությունը մեծապես կախված է նաև ընտանիքի հետ նրա համագործակցության արդյունավետությունից, քանի որ հատկապես նախադպրոցական տարիքում հնարավոր չէ մեծ արդյունք ակնկալել, եթե ծնողներն ու ընտանիքը չեն դառնում մանկապարտեզի գործընկերը: Ուստի որակյալ գործընկեր ունենալու համար պետք է նրան պատրաստել, այսինքն՝ նաև ծնողների համար կազմակերպել դասեր ու սեմինարներ:

Հետևաբար, կարևոր ու արդիական է հետազոտական աշխատանքի թեման:

Անցնելով իրենց կրթական ուղին՝ երեխաներն անցնում են մի քանի շրջադարձային փուլեր՝ հաճախում են մանկապարտեզ, ապա՝ դպրոց, այնուհետև ընտրում ավագ դպրոցը կամ նախնական/միջին մասնագիտական կրթությունը և այլն: Յուրաքանչյուր անցումային փուլ լի է որոշակի սպասումներով, ակնկալիքներով, նաև անհանգստությամբ և անորոշությամբ: Մեր փորձը ցույց է տալիս, որ երեխաներն ու նրանց ծնողներն առավել մեծ ոգևորություն և, միաժամանակ, մտահոգություն են ունենում, երբ երեխան հաճախում է մանկապարտեզ :Երեխան պետք է պատրաստ լինի մանկապարտեզին, նոր միջավայրին, նոր շրջապատին ու նոր պարտականություններին: Սակայն մանկապարտեզը ևս պետք է պատրաստ լինի սահուն ընդունելու և ներառելու երեխային իր միջավայրում: Երեխայի հաջողությունների գրավականը պայմանավորված է այն բանով, թե որքանով գրագետ ու սահուն մանկապարտեզը երեխայի ծնողի հետ միասին կկարողանա կազմակերպել այդ գործընթացը:

Նպատակը՝

Ընդլայնել ծնողների հետ աշխատանքի զարգացման ուղիները:

Ուսումնասիրել ծնողական համայնքի արդի պահանջները նախադպրոցական հաստատությունից:

Խնդիրները՝

Վերհանել մանկավարժական աշխատողի և սաների ծնողների միջև առկա խնդիրները և վերհանել դրանց հաղթահարման ուղիները:

Համապատասխանությունը նոր չափորոշչի /ծրագրային պահանջներին:

Արդի ժամանակում չափորփշիչը պահանջում է, որ ծնող երեխա փոխհարաբերությունը կառուցվի սիրո, համերաշխության, միմյանց զիջելու և դիմացի կարծիքը հաշվի առնելու սկզբունքով, ապա մեր երեխաները կլինեն զարգացած ու մարդասեր, ընտանեկան դաստիարակության հիմունքները կառուցված կլինեն ազգային ավադույթների և ժամանակակից նախադպրոցական մանկավարժության պահանջների ոգով :

1.Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների, ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ սաների կրթական աշխատանքների կազմակերպման ու ընտանեկան դաստիարակության հարցերում

Յուրաքանչյուր անհատի ճակատագիրը դասավորվում է դեռ մանկուց: Երեխաների դաստիարակության, զարգացման, ապագայի ձևավորման մեջ որքան մեծ է ընտանիքի դերը դրանից էլ զատ՝ մանկապարտեզինը: Մեր աշխատանքի բուն նպատակը հնարավորինս ներկայացնել մանկապարտեզ-ընտանիք կապի առանձնահատկությունները, առավելությունները երեխայի դաստիարակության հարցում:Մանկապարտեզ-ընտանիք համագործակցությունը երեխաների զարգացման կարևոր մասն են կազմում, քանի որ այդ կապը ավելի արդյունավետ է դարձնում երեխայի ճիշտ զարգացմանը նպաստելը: Ծնողների հետ համագործակցությունը վաղ մանկական և նախադպրոցական տարիքի երեխաների կրթական արդյունավետ ծրագրի անհրաժեշտ մասն է կազմում: Ծնողները մշտապես կարիք ունեն իմանալու մանկապարտեզի տեսակետն իրենց երեխայի մասին: Միևնույն ժամանակ մանկապարտեզը շահում է ծնողների՝ տվյալ բնագավառին իրազեկությունից և երեխայի դաստիարակության գործին նրանց ներդրումներից: Դրա շնորհիվ մանկավարժները հնարավորություն են ունենում հասնել երեխայի վարքի դրդապատճառների առավել համակողմանի պատկերացման: Համագործակցության արդյունքում թե՛ ծնողը և թե՛ դաստիարակը արժեքավոր տեղեկություններ են ստանում երեխայի կարողությունների, հետաքրքրությունների, համակրանքների, հակակրանքների մասին: Այս տեղեկատվությունը պետք է այնպես փոխանակել, որ այն լավագույնս ծառայի երեխայի շահերին: Ընտաննիքի և մանկապարտեզի համագործակցության մոդելի կենտրոնում երեխան է: Անտարակույս, նա է իր կրթության ու զարգացման հաջողության գործի գլխավոր դերակատարը մանկապարտեզում և ընտանիքում: Սակայն համգործակցությունն ինքնին չի կարող հաջողակ երեխաներ ունենալու նախապայման դառնալ: Անհրաժեշտ է մշակել այնպիսի ձևեր, որոնք կնպաստեն ներգրավել ուղղորդել, խթանել և շահագրգռել երեխաներին՝ ինքնուրույն հասնել հաջողության:

Երեխաները մեր կյանքի ապագան են: Ինչպիսի՞ն կլինի մեր ապագան, այն պայմանավորված է այն իրողություններով, թե ինչպիսի երեխաներ կկրթենք և կդաստիարակենք մենք:Դաստիարակությունը նպատակաուղղված ներգործություն է երեխաների զարգացման, նրանց գիտակցության, վարքի, աշխարհայացքի, արարքների և սովորությունների վրա:

Դաստիարակության հիմնական նպատակն անձի ձևավորմանն ու նրա հետագա զարգացմանը նպաստելն է՝ սկսած ծնված օրվանից, ուստի ընտանիքը եղել և մնում է անձի դաստիարակության օղակը:Որպեսզի կրթենք հասարակությանն արժանի սերունդ, պետք է համագործակցեն ծնողներն ու դաստիարակները: Առանց ծնողների օգնության և աջակցության՝ հնարավոր չէ լիարժեք արդյունքի հասնել:Ծնողների հետ շփումը օգնում է դաստիարակին տեղյակ լինել, թե ինչ է կատարվել տանը երեխայի հետ, որպեսզի այս կամ այն կերպ կարողանա ազդել նրա հոգեբանության, վարքի և տրամադրության վրա:Առաջին բարոյական զգացմունքները արմատավորվում են ընտանիքում: Անհամերաշխ ընտանիքում, ուր չկան ընտանեկան ընդհանուր պահանջներ, բարի շփում երեխա և ծնող հարաբերություններում, երեխաները լինում են պասիվ, չշփվող և մեկուսանում են իրենց ներաշխարհի մեջ ու հեռանում են ընտանիքի անդամներից: Ծնողները և ընտանիքի մյուս անդամները երեխային պետք է դիտեն որպես գործուն անձնավորություն և նպաստեն նրա ընդունակությունների զարգացմանը: Երբ երեխան զգում է, որ ընտանիքի բոլոր անդամները ներկայացնում են միատեսակ պահանջներ, նրա մեջ մշակվում է լսելու կայուն սովորություն, լինի տանը, թե մանկապարտեզում: Ընտանիքը հասարակության նյութական, հոգևոր, մշակույթային և այլն արժեքներ փոխանցող կարևոր օղակ է:

Երեխաների կրթության իրականացման գործում մեծ դեր է խաղում նաև ծնող-դաստիարակ-մանկապարտեզ օղակը:Մանկապարտեզի դաստիարակի հեղինակությունը պայմանավորված է մանկավարժական գիտելիքից, աշխատանքային գործունեությունից, անցկացրած ժողովներից, բաց դասերից, արդարացի մոտեցում բոլոր երեխաներին ճիշտ արձագանք առաջացած խնդիրների վերաբերյալ: Որպեսզի ծնող-մանկապարտեզ կապը ավելի անկաշնադ ու հաճելի լինի, պետք է ստեղծել այնպիսի մթնոլորտ, որ ծնողն իրեն ազատ ու վստահ զգա: Ընտանիքի և մանկապարտեզի կենտրոնում երեխան է: Ընտանեկան դաստիարակության հաջողությունն ապահովողառաջին նախապայմանը համերաշխ ընտանիքն է: Համագործակցությունը չի կարող հաջողություն ունենալ, եթե չմշակվեն այնպիսի ձևեր, որոնք կնպաստեն ներգրավել, ուղղորդել, խթանել երեխաներին ինքնուրույն հասնել հաջողության: Ծնողները մշտապես կարիք ունեն իմանալու մանկապատրեզի տեսակետն իրենց երեխայի մասին: Համագործոկցության արդյունքում թե՛ ծնողը, թե՛ դաստիարակը արժեքավոր տեղեկություններ են ստանում կարողությունների, հետաքրքրությունների մասին:

Ուսումնական տարվա սկզբում երեխան, մտնելով մանկապարտեզ, իրականում մտնում է նոր միջավայր, ոչն իրեն անծանոթ է: Դաստիարակը, դիտելով, ուսումնասիրելով երեխաներին, ծանոթանալով նրանց առանձնահատկություններին, ճանաչելով որպես անհատականություն, որոշ ժամանակ անց պետք է կազմակերպվի ծնողական ժողով, որտեղ քննարկվում են կրթության և երեխայի զարգացման փուլերին առընչվող մտահոգությունների մասին հարցեր: Ծնողական ժողովները օգնում են թե՛ դաստիարակին, թե՛ ծնողներին ավելի մոտիկից ճանաչել միմյանց: Առավոտյան հանդիպումների ընթացքում ծնողների ուշադրությունը պետք է հրավիրել <<Ծնողական լրատու>> վահանակին: Այստեղ տեղադրվում են թեմաներ ուսման վերաբերյալ, օրվա կատարվելիք աշխատանքներին և գրականությանը, որին պետք է ծանոթանա ծնողը ընթերցանությամբ: Օրվա 2-րդ կեսում՝ երեխաներին տուն ճանապարհելիս, դաստիարակը, հանդիպելով ծնողների հետ, ներկայացնում է այն աշխատանքային գործունեությունը, որոնք կատարվել են երեխաների հետ և առաջարկել ամրապնդելու նպատակով աշխատանքը շարունակել տանը՝ ակտիվ պահելով երեխային: Խմբասենյակի զարգացնող միջավայրը մեծ նշանակություն ունի երեխայի կրթության, դաստիարակության զարգացման համար: Կենտրոններից զատելով խոսքի զարգացման բաժինը ծնողներին պետք է ուղղարդել, ցանկություն արթնացնելդեպի ընթերցանությունը, տրամադրել գրքեր ընթերցանության համար՝ սեր արթնացնելով դեպի գիրքը: Կարդալուց հետո դաստիարակը հավաքում է գրքերը ու զրույց անցկացնում ծնողների հետ, թե ինչքանով արդյունավետ եղավ երեխայի համարև ինչպիռի զգացողություն ունեցավ ծնողը, երբ ընթերցեց երեխայի ներկայությամբ:Մանկապարտեզը անհրաժեշտության դեպքում պետք է այցելի ընտանիք, որտեղ լուծվում են շատ խնդիրներ.

1. ճանաչում է երեխայի ընտանիքին, տեղեկանում, թե ինչու է երեխան երկար բացակայել: Դիտելով, ուսումնասիրելով երեխայի սոցիալական միջավայրի ազդեցությունը նրա անձի ձևավորման վրա՝ կազմում է կարծիք:

2. օգնել ծնողներին ընտանեկան պայմաններում երեխաներին դաստիարակելու:

3. կազմակերպել ծնողների մանկավարժական իրազեկումը: Դաստիարակի և ծնողի արդյունավետ համագործակցության շնորհիվ շահում է երեխան:

Մանկապարտեզ-ընտանիք փոխհարաբերությունը ավելի արդյունավետ լինելու համար կազմակերպվում է <**Բաց դռների օր>:**

Ծնողը կատարում է դիտարկումներ, տեսնում իր երեխայի առաջխաղացումները, ձեռք բերած նոր գիտելիքները: Այս ամենը ոգևորում է ծնողին, ինչն էլ պատճառ է հանդիսանում էլ ավելի ուշադիր ու հետևողական լինել երեխայի դաստիարակության զարգացման հարցում: Մանկապարտեզ-ընտանիք փոխհարաբերությունը արդյունավետ լինելու նպատակով կարելի է ստեղծել <<Առաջարկությունների տուփ>>, որտեղ ծնողներն առաջարկում են իրենց մտքեր, մտահոգություններն ու հարցերը, մանկավարժական կոլեկտիվին ներկայացնել հատուկ տուփի միջոցով, որտեղ Երկկողմանի համագործակցության կանոնավոր շփման միջոցով միջոցով ծնողները ու դաստիարակները սերտորեն համագործակցում են ի շահ երեխաների բնականոն զարգացմանը: Երեխան դաստիարակություն պետք է ստանա առողջ միջավայրում՝ թե՛ տանը, թե՛ մանկապարտեզում, նա պետք է շրջապատված լինի սիրով և ջերմությամբ:

. Եթե երեխային միշտ քննադատում են, նա սովորում է ատել:

. Եթե երեխան ապրում է թշնամության մեջ, նա սովորում է լինել ագրեսիվ:

. Եթե երեխան ապրում է համբերության մեջ, նա սովորում է հասկանալ մարդկանց:

. Եթե երեխային աջակցում են, նա սովորում է գնահատել:

. Եթե երեխային ծաղրում են, նա պարփակվում է իր մեջ:

. Եթե երեխան ապրում է փոխըմբռնման մեջ, նա սովորում է սիրել բոլորին:

Եթե գոյություն ունի մանկապարտեզ-ընտանիք փոխհարաբերությունը, և այն իսկապես կառուցվում է սիրո, համերաշխության, ներողամտության, փոխըմբռնումով, ապա մեր երկրում երեխաները կլինեն զարգացած, մարդասեր, հայեցի: Եթե դաստիարակության հիմքը կառուցված լինի ազգային ավանդույթների և ժամանակակից նախադպրոցական մանկավարժության մահանջների ոգով, ապա հայ ընտանիքը կպահի իր ազգային դիմագիծը, և երեխաները կլինեն հայրենասեր, նման սերունդները կապահովեն ամուր ընտանիք, իսկ կայուն ու ամուր ընտանիքն ազգի գոյապայպանման հիմքն են:

Եվ վերջում կուզեի ավելացնել ՝ մեջբերելով Բենջամին Սփոքի արտահայտած մտքերից. **<<Լավ մանկապարտեզը ոչ թե փոխարինում, այլ լրացնում է ընտանեկան դաստիարակությունը>>:**

2. *Մանկապարտեզի և ընտանիքի կապը որպես անհատական մոտեցման արդյունավետ իրականացման պայման*

Երեխաների դաստիարակության գործընթացում անհատական մոտեցման հիմնախնդիրը միշտ էլ եղել է առաջադեմ մանկավարժության ուշադրության կենտրոնում: Արդեն Կոմենսկու մանկավարժական համակարգում շատ պարզ նշված է այն մասին, որ ուսուցման և դաստիարակության ողջ գործընթացում անհրաժեշտ է հաշվի առնել երեխաների տարիքային և անհատական առանձնահատկությունները:

Ռուս մանկավարժ Ուշինսկին մշակել է երեխաների նկատմամբ անհատական մոտեցման ընդարձակ մեթոդիկա: Միևնույն ժամանակ նա արտահայտել է այն կարծիքը, որ դժվար իրավիճակներում հայտնված երեխաների նկատմամբ չի կարելի կիրառել ինչ-որ դեղատոմս՝ դրանով իսկ շեշտադրելով խնդրի լուծման ստեղծագործական բնույթը:

Մակարենկոն գտնում էր, որ մանկավարժական մի շարք խնդիրների իրականացման համար շատ կարևոր է անհատական մոտեցման սկզբունքը՝ հատկապես կոլեկտիվի ձևավորման գործում, աշխատանքում, խաղում և այլն: Նա եկավ այն համոզման, որ իրականացնելով անձնավորության դաստիարակության ընդհանուր ծրագիրը՝ մանկավարժ-դաստիարակն այնտեղ պետք է ներմուծի «ճշգրտումներ»՝ կապված երեխայի անհատական առանձնահատկությունների հետ: Երեխայի բնավորության մեջ ընդհանուրը և անհատականը խիստ փոխկապակցված են, որոնք ստեղծում են «խճճված հանգույցներ»: Սրանով Մակարենկոն ընդգծում էր անհատական մոտեցման դժվարությունը: Նա գտնում էր, որ դաստիարակության և ուսուցման գործընթացում անհրաժեշտ է հենվել երեխայի դրական որակների վրա: Ըստ նրա սա գլխավոր հենարան է դաստիարակության ընդհանուր համակարգում և անհատական մոտեցման սկզբունքում: Մակարենկոն գտնում էր, որ լավը մարդու մեջ միշտ պետք է ծրագրավորել և դաստիարակը պարտավոր է երեխային մոտենալ լավատեսորեն, թեկուզ սխալվելու ռիսկով:

Դրա համար ամեն մի երեխայի մեջ անհրաժեշտ է հայտնաբերել բնավորության դրական կողմերը և արարքները և հավատ ներշնչել իր ուժերի և հնարավորությունների նմատմամբ, զարգացնել լավատեսություն, կյանքի նկատմամբ ուրախություն: Վաղ տարիքից զարգացնել ստեղծագործական գործունեությունը, ակտիվությունը, նախաձեռնությունը:

Մակարենկոն իր ողջ պրակտիկ աշխատանքի ընթացքում ապացուցել է, որ միայն կոլեկտիվում երեխան կարող է ստանալ այնպիսի որակներ, ինչպիսին են հարգել ընկերոջ կարծիքը, նպատակաուղղվածություն, կամք, ազնվություն, մարդասիրական զգացումներ և

այլն: Չնայած այս տեսակետին, նա ընդգծում էր, որ այս որակները զարգացնելիս հաշվի պիտի առնել անհատական մոտեցման անհրաժեշտությունը: Երեխային ուսումնասիրելիս ոչ միայն պետք է տեսնել արտաքինը, այն ինչ աչքի է ընկնում, այլ թափանցել երեխայի ներաշխարհը, հաշվի առնել նրա ցանկությունները:

Մեծ տեղ տալով անհատական մոտեցմանը Մակարենկոն չէր առաջարկում ինչ-որ յուրահատուկ մեթոդներ: Այս կամ այն մեթոդը կարելի է օգտագործել՝ ելնելով պայմաններից, ստեղծված իրավիճակից և դաստիարակվողների առանձնահատկություններից: Ամեն մի միջոց կունենա որոշակի արդյունք, եթե այն չի առանձնացվում դաստիարակության ընդհանուր համակարգից: Ինչպես խորհրդային շատ մանկավարժներ, այնպես էլ Մակարենկոն նախադպրոցական տարիքի երեխայի ուսուցման և դաստիարակության ամենամեծ միջոցը համարում էր խաղը. «Ինչպիսին երեխան խաղում է, այնպիսին էլ կլինի աշխատանքում, երբ մեծանա» [6, 121]:

Երեխաների նկատմամբ անհատական մոտեցման հիմնախնդիրն իր մեծ արձագանքն է գտել Սուխոմլիսկու մանկավարժական հայացքներում: Դաստիարակության հաջողությունը նա դիտարկում էր հենց այդ դիրքերից: «Դաստիարակությունը նախ և առաջ մարդաբանություն է: Առանց երեխային ճանաչելու՝ առանց իմանալու նրա մտավոր զարգացումը, մտածողությունը, հետաքրքրությունները, հրապուրանքները, ընդունակությունները, տվյալները, հակումները, չկա դաստիարակություն» [3, 9]: Երեխաների անհատական առանձնահատկությունների հաշվի առնելու ճանապարհը Սուխոմլինսկին համարում էր ընտանիքը, նրա մանկավարժական լուսավորությունը, մանկավարժական տարրական գիտելիքների առկայությունը:

Երեխայի համար ընտանիքը համարվում է բնականաբար դաստիարակող միջավայր: Այն իր հետքն է թողնում երեխայի բնավորության և վարքի ձևավորման վրա: Ընտանիքում է ստանում աշխարհաճանաչման առաջին դասերը և ծանոթանում կյանքի տարրական կանոններին: Ստացած տվյալներն աստիճանաբար ընդարձակվում և բարդանում են այն չափով, ինչքանով զարգանում և աճում է երեխան:

Երեխաների հետ աշխատող մանկավարժը պետք է ծանոթանա ընտանեկան դաստիարակության պայմաններին: Շատ ծնողներ չունենալով մանկավարժական կրթություն, ծանոթ չլինելով գիտական մանկավարժության այսօրվա նվաճումներին, լիարժեք չեն պատկերացնում անհատական մոտեցման անհրաժեշտության դերը: Անհատական մոտեցման արդյունավետ պայմաններից են համարվում մանկավարժների այցելություններն ընտանիք, որն աննպատակ չպետք է լինի: Առաջին այցելության ժամանակ դաստիարակը

ծանոթանում է ծնողների և ընտանիքի մյուս անդամների հետ, ստանում է որոշակի պատկերացում ընտանեկան պայմանների և դաստիարակության մասին: Զրուցելով ծնողների հետ անհրաժեշտ է բացահայտել ծնող-երեխա փոխհարաբերությունը, պարզել երեխայի տեղն ընտանիքում: Մանկավարժը կարող է եզրակացնել, թե ընտանեկան պայմաններն ինչքանով են ազդում երեխայի անհատական առանձնահատկությունների ձևավորման վրա: Կարևոր է բացահայտել նաև, թե երեխան ինչով է զբաղվում տանը, ունի սիրելի զբաղմունք կամ խաղ: Այս հարցի պարզաբանումը խոսում է այն մասին, թե ծնողները ինչքանով են հաշվի առնում օգտակարը և վնասակարը երեխայի համար: Մանկավարժի կարևոր խնդիրներից է նաև պարզել խաղալիքների դերը երեխայի կյանքում: Ո՞ւմ հետ է խաղում, ինչո՞վ է խաղում. հարց, որ շատ է հուզում բոլորիս: Առավել կարևոր է բացահայտել երեխայի նկատմամբ միասնական պահանջի հարցը: Դաստիարակության գործընթացում միասնականության բացակայությունն ընտանիքի անդամների միջև հանդիսանում է խոչընդոտ երեխայի անձնավորության ճիշտ ձևավորման համար: Սրա վառ օրինակ կարող են համարվել վարքագծի շեղումներն ընտանիքում և մանկապարտեզում: Անհրաժեշտ փաստեր արձանագրելու համար երեխային պետք է ուսումնասիրել թե՛ ընտանիքում, թե՛ մանկապարտեզում: Այս աշխատանքը պետք է կատարել շատ զգուշորեն, քանի որ այն նուրբ հարց է: Սկզբում անհրաժեշտ է խոսել դրական որակների, նրանց կարողությունների, հետաքրքրությունների մասին: Այդ ժամանակ ծնողները կհասկանան, որ դաստիարակները ոչ թե մտածված շեշտում են թերությունները, այլ փորձում են այնպես անել, որ երեխաները դառնան ավելի լավը: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս ծնողների և դաստիարակների միջև ստեղծել վստահություն և փոխըմբռնում: Ցավով պետք է նշել, որ շատ ծնողներ անկեղծ չեն դաստիարակների հետ: Ամոթի զգացումից ելնելով թաքցնում են երեխայի իսկական վարքագիծը տանը, գովաբանում են երեխաներին: Դաստիարակներն այնքան զգույշ պետք է լինեն զրույցների ժամանակ, որ կարողանան «որսան» չասվածը: Այդ նպատակով պետք է խոսեն նաև ընտանիքի մյուս անդամների հետ՝ ստանալով լրացուցիչ տեղեկություն երեխայի մասին:

Փորձենք նկարագրել Արմենի վարքագիծը: Նա մանկապարտեզի ավագ խմբի սան է: Աչքի է ընկնում անկարգապահությամբ և կոպտությամբ: Ծնողների հետ զրույցի ժամանակ պարզվեց, որ նրանք զարմացած են նրա վարքագծով, քանի որ, ըստ նրանց Ա.-ն շատ լսող, բարեհամբույր երեխա է: Պարզեցինք, որ նրանք թաքցրել են իսկական վարքը, որի մասին զգուշացրեց տատիկը. երեխայի համար չի եղել ոչ մի արգելք, միշտ զբաղվել է հեռախոսով կամ համակարգիչով, նեղացրել է փոքրիկ քրոջը, ոչ մեկին չի լսել: Ստանալով նման

տեղեկություն՝ անհրաժեշտ է խորը վերլուծել այն և բացահայտել դաստիարակությունում եղած թերությունները և գտնել դրականին հասնելու ճիշտ ճանապարհը: Պարտավոր ենք ծնողներին հասկացնել մանկապարտեզի և ընտանիքի համատեղ աշխատանքի անհրաժեշտությունը: Որպեսզի ընտանիքի հետ աշխատանքն ունենա հաջողություն, որոշակի արդյունք, անհրաժեշտ է մշակել այնպիսի ծրագիր, որը կօգնի բացահայտել երեխային աշխատանքում, խաղում և գործունեության մյուս տեսակներում, ընկերական միջավայրում, բակում, ծնողների հետ շփման ժամանակ:

Այս ուսումնասիրությունները կօգնեն դաստիարակին ընտրել զրույցի այնպիսի թեմաներ, որոնք օգտակար կլինեն բոլորի համար: Դաստիարակը կարող է ընտրել թեմաներ ամբողջ խմբի ծնողների համար՝ առանձնացնելով նաև անհատական աշխատանք առանձին ընտանիքների հետ:

Ուսումնասիրելով բազմաթիվ ընտանիքներ՝ կարող ենք առանձնացնել բարեկեցիկ, արտաքնապես բարեկեցիկ և իրոք ոչ բարեկեցիկ ընտանիքներ:

Բարեկեցիկ ընտանիք – այս ընտանիքներին բնորոշ է ընտանիքի անդամների միասնական պահանջը երեխաների նկատմամբ. ուշադրություն նրանց հարցերին, զարմանք հետաքրքրությունների նկատմամբ, ճիշտ կազմակերպված խաղեր և այլ գործունեություն: Այս ընտանիքներում իրականացնում են ինչպես անհատական, այնպես էլ ընդհանուր աշխատանք: Շատ ծնողներ կարիք ունեն մանկավարժական գիտելիքների ընդլայնման: Նրանց հուզում է իրենց երեխաների զարգացման մասին հարցերը, մտահորիզոնի շրջանակները, ի՞նչն է կարևոր երեխայի համար, ինչպե՞ս կազմակերպել ազատ ժամանակը: Իհարկե, անհատական մոտեցումը չի կարող քարացած լինել: Մշտապես առաջանում են նոր պահանջներ, խնդիրներ, որոնք կյանքն է թելադրում, որն էլ պահանջում է ստեղծագործական մոտեցում, գիտելիքներ և պրակտիկ փորձ ամեն մի երեխայի, ամեն մի ընտանիքի հետ աշխատելիս: Ընտանիքի անդամների քանակը, միայնակ երեխայի հիմնախնդիրը, «տատիկի մանկավարժությունը» չեն կարող լինել որոշակի գործոն ճիշտ կամ սխալ դաստիարակության համար: Կարող ենք բերել բազմաթիվ օրինակներ, որ երեխան մեծանում է միայնակ, բայց դաստիարակության հետ կապված խնդիր չկա: Երեխան այդ ընտանիքում ունի որոշակի պարտականություններ. խաղալուց հետո հավաքում է խաղալիքները և դնում իրենց տեղում, գիտի ինքնասպասարկման կանոնները, օգնում է մայրիկին և այլն: Մեկ այլ ընտանիքում նորից երեխան մեծանում է միայնակ: Հայրը սիրում է զբաղվել տեխնիկայի վերանորոգման աշխատանքով և այդ աշխատանքին անմիջական մասնակից է դարձնում իր երեխային, որն էլ

սիրով կատարում է հոր հանձնարարությունները: Այս աշխատանքի շնորհիվ երեխայի մոտ ձևավորվում է վառ արտահայտված հետաքրքրություն տեխնիկայի նկատմամբ:

Հետաքրքիր են նաև այն ընտանիքները, որտեղ երեխային դաստիարակում է միայնակ մայրը, որ շատ ցավոտ խնդիր է մեր հասարակության համար: Այն ընտանիքներում, որտեղ մայրն է դաստիարակողը և նա համագործակցում է դաստիարակների հետ, լրացնում է իր մանկավարժական գիտելիքները, հետաքրքրվում է իր երեխայի ընդհանուր զարգացման խնդիրներով, ճիշտ է հաղորդակցվում երեխայի հետ, մասնակից է դառնում մանկապարտեզի հասարակական աշխատանքին, համարվում է բարեկեցիկ ընտանիք:

Կան ընտանիքներ, որտեղ ճիշտ ընթացող ընտանեկան դաստիարակության հետ նկատվում են որոշակի բացթողումներ, թույլ օղակներ: Երեխան մանկապարտեզում ունի ընկերներ, որոնց հետ խաղում է նաև տանը, բայց աշխատանքային դաստիարակությունը ճիշտ չեն իրականացնում: Ամբողջ աշխատանքը երեխայի փոխարեն կատարում են մայրը կամ քույրը: Ընտանիքում ճիշտ չեն դրված աշխատանքային դաստիարակության հիմքերը. տղա երեխան ոչ մի աշխատանք չպետք է կատարի, քանի որ ավագ քույրը եղել է նրա խնամողը և չի սովորեցրել ինքնուրույնություն և ակտիվություն:

Արտաքուստ բարեկեցիկ ընտանիքի օրինակ կարող է լինել հետևյալը: Ընտանիքում ամեն ինչ շատ լավ է: Բոլորը համերաշխ են, աշխատասեր, հոգատար միմյանց նկատմամբ: Ընտանիք այցելելու և նրանց հետ զրույցի ժամանակ պարզվեց, որ նրանք բարյացակամ չեն վերաբերվում իրենց տղայի ընկերներին: Ծնողները խստիվ արգելել են ընկերների այցելություն իրենց տուն: «Ավելի լավ է հեռուստացույցով կամ համակարգիչով զբաղվի՛ր, խաղա՛ հայրիկի հետ, քան տուն գան և կեղտոտեն այն»: Ճիշտ է, տունը շատ մաքուր է, և տիրում է թանգարանային կարգ ու կանոն, որն էլ ազդում է ընկերների հետ շփմանը: Ուսումնասիրությունը ցույց տվեց, ու երեխան ապրում է իր ընտանիքի «նեղ աշխարհում»:

Գոյություն ունեն նաև **ակնհայտորեն անբարեկեցիկ ընտանիքներ**, ընտանիքներ որոնց ցուցանիշ կարող է համարվել չկարգավորված կենցաղը, երեխայի նկատմամբ ոչ միասնական մոտեցումը: Այդ ընտանիքներում, որտեղ բացակայում է դաստիարակությունը, երեխան դուրս է հսկողությունից: Նկատվում են նաև ֆիզիկական բռնության դեպքեր:

Կան նաև այնպիսի մայրեր, որոնք երեխայի մեջ տեսնում են իրենց կյանքի նպատակը և ըստ իրենց շատ մեծ եռանդով զբաղվում են նրա դաստիարակությամբ: Նման դեպքերում նրանք երեխայի մեջ ամրագրում են այնպիսի անցանկալի երևույթներ, ինչպիսին են կամակորությունը, եսասիրությունը, անտարբերություն «սիրող» մոր պահանջների նկատմամբ: Նրանք կատարում են երեխայի բոլոր ցանկությունները. պակասում է երեխայի

ինքնուրույնությունը, ամեն ինչ անում է մայրիկը: Մնում է միայն պահանջել: Դաստիարակից պահանջվում է շատ մեծ աշխատանք նման մայրերի հետ: Նրանք պետք է խոսեն մայրական կույր սիրուց առաջացող վտանգների մասին:

Հանդիպում են նաև երիտասարդ մայրեր, որոնք, հակառակը, չեն ցանկանում իրենց ուժն ու եռանդը տալ իրենց երեխային: Երեխաները մնում են հսկողությունից դուրս: Միայնակ մնալը ոչ միայն վտանգավոր է, այլ նաև տխուր և առաջացնում է վախի զգացում: Նման ապրումներն ազդում են երեխայի առողջության վրա, նրանք դառնում են դյուրագրգիռ, նյարդային, վիրավորված, վախկոտ:

Նման մայրերի հետ դաստիարակը պետք է շատ լուրջ աշխատանք կատարի և խիստ ձևով ազդի նրանց վրա, նույնիսկ կազմակերպի դաստիարակչական աշխատանքներ: Անհրաժեշտ է ցույց տալ այն վտանգները, որ սպառնում են երեխային, երբ նա տանը միայնակ է: Աշխատանքները պետք է կատարել նրբանկատորեն, որպեսզի մոր մոտ չառաջանա տհաճություն իր երեխայից, կամ երեխան համարվի հոգս:

Նման երեխաների դաստիարակությամբ հիմնականում պետք է զբաղվեն փորձառու մանկավարժները: Կարևոր է ոչ թե պահանջել, այլ համոզել, որոշակի դեպքերում հարգել նաև նրանց հետաքրքրությունները, արթնացնել հետաքրքրություն իր երեխայի նկատմամբ, ցույց տալ, որ երեխան ոչ միայն հոգս է, այլև ուրախություն, կյանքի նպատակ: Երեխայի հետ շփումը հարստացնում է մոր հոգևոր աշխարհը: Անհրաժեշտ է բացատրել ծնողին, որ ապագայում երեխան է դառնալու նրա հենարանը:

Կան երեխաներ, ովքեր մեծանում են առանց հայրերի: Նման ընտանիքների շատ երեխաներ իրենց համար ստեղծում են հոր կերպար, հասակակիցներին և դաստիարակներին պատմում իրենց երևակայած հայրիկի մասին: Երեխան ուզում է լինել բոլորի նման: Չի կարելի կոտրել նրա ստեղծած աշխարհը, բացահայտել սուտը, պատժել: Լավ հայր ունենալու նրա երազանքը պետք է շատ նուրբ ձևով պահպանել՝ չմոռանալով այն մասին, որ երեխան և նրա մայրը կյանքի շեմին են, նրանք պետք է առաջ շարժվեն կյանքի դժվար ճանապարհով: Երեխայի համար հավասարապես թանկ ու սիրելի են և՛ հայրիկը, և՛ մայրիկը, ուստի կողմերից մեկնումեկի բացակայությունը խաթարում է երեխայի կյանքը: Փոքրիկը դառնում է ինքնամփոփ, լռակյաց: Այս փոփոխությունները, բնականաբար, բացասաբար են անդրադառնում նրա բնավորության ձևավորման վրա: Հատկապես շատ ծանր է, երբ ծնողները միմյանցից հեռանում են թշնամացած: Շատ դեպքերում գիտակցաբար իրենց ատելությունը ներարկում են երեխաներին: Երեխաներին բախտի քմահաճույքին թողած ծնողները հասարակությանը ոչ արժանին են հատուցում:

Դաստիարակի աշխատանքն ընտանիքի հետ ամենադժվարն է, բայց ամենաանհրաժեշտը: Այս աշխատանքը երեխայի նկատմամբ անհատական մոտեցման անբաժան գործն է, յուրահատուկ օգնություն, միաժամանակ ոչ ցանկալի որակների կանխում, հոգատարություն նրա կյանքի նկատմամբ: Կազմակերպելով ծնողների հետ աշխատանք՝ դաստիարակն առաջին հերթին ուշադրություն է դարձնում ոչ լիարժեք ընտանիքներին, փորձում օգնել ծնողներին: Աշխատանքի ձևերը շատ տարբեր են, բայց առաջնայինը մնում է անհատականը: Փորձված դաստիարակներն առանձնացնում են կոնկրետ հարցեր ծնողների հետ աշխատելիս: Միասնական դաստիարակչական աշխատանքի համար մշակում են ծրագիր: Նրանց պարտականությունները շատ են և բազմազան: Հաշվառումների մեջ պետք է նշեն երեխաների վարքագիծը գործունեության տարբեր տեսակներում, բնավորության գծերը և մտածեն երեխայի հետ աշխատանքի տարբեր ձևերի մասին:

Ընտանեկան դաստիարակության մանկավարժությունը դաստիարկության մասին գիտության ամենադժվար բաժինն է: Մանկավարժական մտքի պատմության բոլոր փուլերում ընտանեկան դաստիարակության հարցերն ըստ ամենայնի արծարծվել են դասական մանկավարժների կողմից: Ընտանեկան դաստիարակության լուրջ թերություններից մեկն էլ այն է, որ շատ հաճախ ծնողները չեն ճանաչում երեխային, հաշվի չեն առնում նրա պահանջմունքները, նախասիրությունները, ցանկությունները և ձգտումները:

Ծնողների հետ աշխատանքում կարևորում ենք զրույցների դերը: Ծնողների հետ անհատական զրույցները չպետք է լինեն պատահական առավոտյան երեխային ընդունելիս կամ երեկոյան տուն ճանապարհելիս: Նման դեպքում կարող են փոխանակել մի քանի նախադասություն: Զրույցները պետք է իրականացնեն ծնողների համար հարմար ժամանակ, հանգիստ պայմաններում: Նման զրույցների համար դաստիարակը շատ մանրակրկիտ պետք է պատրաստվի: Զրույցների ժամանակ պետք է ներկայացվեն նաև երեխայի կատարած աշխատանքները (նկարչություն, ծեփ, ապլիկացիա), որոնք հնարավորություն կտան ավելի լավ ճանաչելու երեխային և զրույցը կդարձնեն ավելի պարզ և հետաքրքիր:

Ծնողների հետ անհատական աշխատանքը պետք է զուգահեռվի կոլեկտիվ աշխատանքի հետ: Ծնողների հետ աշխատելիս անհրաժեշտ է բացահայտել, թե երեխան տանը և մանկապարտեզում ինչպես է վերաբերվում աշխատանքին, աշխատելիս կամային որակներ դրսևորում է, թե ոչ: Կարևոր է ծնողներին բացատրել, որ եզրակացություն անելիս ելնել տարբեր երևույթներից և ոչ թե հակառակը, սկզբում եզրակացնել, հետո արձանագրել փաստը: Օրինակ՝ ըստ ծնողի՝ իր երեխան բարևում է բոլորին, բայց պարզվեց, որ տղան

բարևում է միայն մեծահասակներին: Խմբասենյակ մտնելիս շրջվում է դեպի դաստիարակը և բարևում, իսկ երեխաներին՝ ոչ:

Վերոնշյալից կարող ենք եզրակացնել.

1. Ինչպես ծնողների կոլեկտիվի, այնպես էլ առանձին ծնողների հետ աշխատանքը կունենա արդյունք, եթե լավ ենք տիրապետում ընտանեկան դաստիարակության առանձնահատկություններին:
2. Դրական արդյունք կստանանք այն ժամանակ, երբ ծնողների և դաստիարակների միջև կա համատեղ աշխատանք և միասնական պահանջ երեխաների նկատմամբ:
3. Այն ծնողներին, ովքեր չունեն մանկավարժական կրթություն, անհրաժեշտ է տալ որոշակի գիտելիքներ տարիքային և անհատական առանձնահատկությունների մասին, ինչը հնարավորություն կտա երեխաների մեջ տեսնել և՛ դրականը, և՛ բացասականը և վերլուծել նրանց արարքները:
4. Ընտանիքի և մանկապարտեզի կապը երեխաների նկատմամբ անհատական մոտեցում դրսևորելու կարևոր պայմաններից մեկն է: Դրա իրականացումը պահանջում է խոր գիտելիքներ, հաղորդակցական կարողություններ, հմտություններ և այլն:

Եզրակացություն

Որպես դաստիարակ և ծնող, շատ եմ կարևորում մանկապարտեզ-ընտանիք համագործակցությունը: Երբ ծնողը մասնակից է լինում մանկապարտեզում կազմակերպված ծեսերին, միջոցառումներին, խաղերին, դա ավելի է մտերմացնում մանկապարտեզ-ընտանիք կապը: Ծնողներին ներգրավելը տալիս է իր դրական արդյունքները:

Դրանք են՝

- Ծնողների ոգևորվածությունը
- Համախմբվածությունը
- Մշտական շփումը մանկապարտեզի անձնակազմի հետ
- Ծնողների վստահության բարձրացումի մանկապարտեզի և դաստիարակության նկատմամբ
- Երեխաների լավ վարքը

Մանկապարտեզի-ընտանիք կապի ամրապնդման համար կարևորվել է մեր համատեղ աշխատանքը, որը երկուստեք հաճելի է:

Գրականության ցանկ

1. Ա. Ս. Մարության, Ա.Մ. Դալլաքյան << Նախադպրոցական մանկավարժության>>

բուհական դասագիրք, Երևան 2008թ.

2. Հասմիկ Միտոյան, Լալա Սմբատյան <<Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար>> Երևան 2010թ.

3.Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա.Ս., Մանկավարժություն, Երևան, 2005, 455 էջ:

4.Ղույումչյան Գ.Ե., Մանկավարժություն, գիրք 2, Երևան, 2005, 232 էջ:

5.Սուխոմլինսկի Վ.Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977, 319 էջ
:

6.Սուխոմլինսկի Վ.Ա., Պավլիշի միջնակարգ դպրոցը, Երևան, 1984, 502 էջ: